Lexicographic Works on Medieval Armenian Language

Mohammad Malek Mohammadi (Ph.D)
Department of Armenian Language and Literature,
University of Isfahan, IRI. E-mail: malekm_m@yahoo.com

The lexicography devoted to the vocabulary of Middle Armenian originates relatively in late period. Armenian famous linguist Norayr Byuzandaci was the first who in 1958 writes the dictionary of Medieval Armenian, which is published in 2000. Other dictionaries devoted to the vocabulary of Medieval Armenian are the unpublished vocabulary of Y. Karst titled «Wörterbuch des Mittelarmenischen» /1940-1942/ and «The dictionary of Middle Armenian» by the authors of R. Ghazaryan and H. Avetisyan, which at first in 1978, and then in 1992 has been published in two volumes, then in 2009 has been republished in one volume.

The above mentioned three dictionaries with their advantages and disadvantages and due to the hard works of the authors have their great investment in the sphere of Armenian linguistics and Medieval Armenian researches. The authors have made up the dictionary of Middle Armenian with special approach, method and purpose.

In the article we touch upon the advantages and structure of the three above mentioned dictionaries and discuss several reviews of dictionaries expressed by reviewers.

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԻ» ՁԵՌԱԳՐԵՐԸ

Տաթեւիկ Աթայեան

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» բնագիրը ներկայացուած է մեզ յայտնի մէկ տասնեակից աւելի ձեռագիր մատեաններում: Ս. Ագըլեանի[1], Ս. Տէր-Ներսէսեանի[2], Լ. Բաբայեանի[3], Ժ. Դեդէյեանի[4] եւ այլոց հետազօտութիւններում տրուել են այդ ձեռագրերի հակիրճ նկարագրութիւնները, վեր են հանուել դրանց տարբերութիւնները՝ տարընթերցումների, յաւելումների ու յապաւումների տեսքով, որոշակի աշխատանքներ են կատարուել ձեռագրերի լեզուաոճական առանձնայատկութիւնների քննութեան ուղղութեամբ: Հպանցիկ նշումով առանձնացուել են նաեւ «Տարեգրքի» խմբագրութիւնները: Սակայն պէտք է նաեւ նշել, որ հետազօտողների ուշադրութեան կենտրոնում գերազանցապէս գտնուել է ստեղծագործութեան հեղինակային պատկանելութեան խնդիրը, ուստի եւ թուարկուած ձեռքբերումները հիմնականում կատարուել են հէնց այս համատեքստում: Հետեւաբար՝ ձեռագրերի նկարագրութիւնը եւ համեմատական վերլուծութիւնը յատուկ ուսումնասիրման առարկայ չի դարձել: Մինչդեռ ձեռագրերի ծագումնաբանութեան ճշտման, ինչպէս նաեւ ճիւղագրութեան կազմման խնդիրները համակողմանի քննութեան կարիք ունեն: Յատուկ ուշադրութեան է արժանի նաեւ երկի ձեռագրերի պատմութեան վերականգնումը, քանզի հէնց այդ նիւթի վրայ հիմնուելով է հնարաւոր պարզել տուեալ ստեղծագործութեան տարածուածութիւնն ու ազդեցութիւնը պատմական այս կամ այն ժամանակահատուածում:

«Տարեգրքի» ձեռագրերի ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ երկը նախապէս ունեցել է Ժ. դարի երկրորդ կէս – ԺԳ. դարի վերջ ընդգրկող ժամանակագրական սահմաններ, իսկ ԺԴ. դարում դէպքերի շարադրանքը հասցրել է մինչեւ 1331 թ. իրադարձութիւնները: «Տարեգրքի» ձեռագրերը, բացառութեամբ մէկի (Վենետիկ, թիւ 1308), մեզ են հասել հէնց այս շարունակութեամբ՝ կրելով «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպօլիս եւ Հայոց Մեծաց. յայնմ ժամանակի ժամանակագրութիւն» եւ «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտայ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուականն ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոնի Դ, որոյ էր սպարապետ» խորագրերը:

Ելնելով «Տարեգրքի» ձեռագրերի, ինչպէս նաեւ ստեղծագործութեան տեքստաբանական առանձնայատկութիւններից, հարկ է առանձնացնել գրչագրերի երկու խումբ՝ Ա. եւ Բ (Բ1, Բ2 ենթախմբերով), ինչը երկի ուսումնասիրման աւելի մեծ հնարաւորութիւն կ՚ընձեռի:

Սկսենք Ա. խմբի միակ ձեռագրից, որը հնագոյնն է մեզ հասած գրչագրերի շարքում.

---

1 **Սմբատայ Սպարապետի** *Տարեգիրք*, Վենետիկ, 1956, էջ Ե-ԺԴ:

2 **S. Der Nersessian**, *The Armenian Chronicle of the Constable Smbat or of the "Royal Historian"*, Dumbarton Oaks Papers, XII, 1959, pp. 141-168.

3 **Լ. Հ. Բաբայեան**, *Սմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակի հարցը*,- ՊԲՀ, 1976, թիւ 1, էջ 243-254:

4 *La chronique attribuée au* **Connétable Smbat**, Introduction, traduction et notes par **Gérard Dédéyan**, Paris, 1980, p. 9-37.

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

Վենետիկ, թիւ 1308

Գտնուում է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում: Նկարագրել են Ս. Ագըլեանը (1956 թ.)[5], Ժ. Դեդէյեանը (1980 թ.)[6] եւ Ս. Ճեմճեմեանը (1996 թ.)[7]: Թուղթ, թերթ՝ 179 (17 x 12, 8,5 x 12,5), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ բոլորգիր, տողերը՝ 20: Գրիչ՝ Վասիլ, խորագրերը (1ա, 27ա, 110ա) եւ սկզբնատառերը՝ կարմիր: Յիշատակարաններ՝ 26բ, 38բ, 46բ, 56բ, 65բ, 155բ, 179բ: Ստացողներ՝ Գրիգորիս Բ Աղթամարեցի, Սիմէոն Ապարանեցի, Գրիգոր Հիզանեցի, Յովհաննէս Ներսիսեան: Ձեռագիրը մեզ է հասել էական կորուստներով. բացակայում են առաջին եւ միջանկեալ մի քանի էջեր, տեքստն ընդհատւում է «եւ հանեալ զդանակն եհար ի վերայ կրծից արքային, եւ թագաւորն ընդոստեաւ եւ զձեռն աջոյ ընդդէմ սրոյն տարեալ, եւ նա կրկնեալ զսուրն եւ եհար... » (թղ. 179բ)[8] անաւարտ նախադասութեամբ: Այս ձեռագրի հիման վրայ է կատարուել «Տարեգրքի» վերջին հրատարակութիւնը:

Ելնելով տեքստի լեզուի՝ պարզ եւ մաքուր գրաբարեան բնոյթից, ձեւաբանական ու քերականական առանձնայատկութիւններից[9], ինչպէս նաեւ գրչագրի՝ կիլիկեան գրչութեան հետ ոճական նմանութիւններից[10], ձեռագիրը թուագրւում է ԺԳ. դարի վերջ ԺԴ. դարի սկիզբ: Նշենք նաեւ, որ ձեռագրում գործածւում են ֆրանսերէնից փոխառուած մի շարք բառեր, ինչը պայմանաւորուած է խաչակրաց իշխանութիւնների եւ Կիլիկիայի հայկական պետութեան փոխադրեցութիւններով, ու նոյնպէս բնութագրական է տուեալ ժամանակաշրջանի կիլիկիահայ իրականութեան համար:

Ընդհուպ մինչեւ ԺԹ. դարի վերջը՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան գրադարանում ձեռագրի յայտնուելը, նրա պատմութեան վերաբերեալ ոչինչ յայտնի չէ: Ուստի որոշակի կարեւորութիւն է ձեռք բերում ձեռագրի յիշատակարանների ուսումնասիրութիւնը, որը հնարաւորութիւն է տալիս մասամբ վերականգնել գրչագիր մատեանի անցած ուղին:

Այսպէս, ձեռագրի ամենավաղ յիշատակարանը պատկանում է Վասիլ գրչին. «Զախտապաշար գրաւղս Վասիլ յիշեսջիք ի Քրիստոս»[11]: Այն գրուած է բնագրի գրչութեամբ, ինչը հաւաստի է դարձնում Վասիլի՝ ձեռագրի գրիչը լինելու նշումը: Անհրաժեշտ տեղեկութիւնների բացակայութեան պատճառով անհնար է վերականգնել գրչի կենսագրութիւնը, ուստի, յենուելով ձեռագրի վերոնշեալ լեզուաոճական առանձնայատկութիւնների վրայ, մնում է ենթադրել, որ Վասիլ գրիչը ապրել եւ գործել է ԺԴ. դարում, Կիլիկիայի հայկական թագաւորութեան վանական կենտրոններից մէկում:

Ձեռագրի պատմութիւնը մնում է անյայտ. այն հնարաւոր է ուրուագծել միայն ԺԶ. դարի կէսերից սկսած: Համաձայն յիշատակարաններից մէկի՝ մօտաւորապէս այդ ժամանակ ձեռագիրը պատկանել է Աղթամարի Գրիգորիս Բ Փոքր կաթողիկոսին (1544-1586)[12], ով նորոգել եւ կազմել է արդէն մաշուած ձեռագիրը: Յիշատակարանում մասնաւորապէս նշւում է. «եւ նուաստ ծառայ սուրբ Խաչիս, Գրիգորի՝ Կաթողիկոս, վերստին կապեցի զպատմագիրքս զհնացեալն ի բազում ժամանակեաց, ի թուականութեանս Հայոց ՌԷ (1558), ի թագաւորութեան Հոտքարին, եւ ի զանութեան Վանայ Ղուբաթ Փաշին, Պարսից թագաւորութեան շահ Դայմազին, ԻԸ տարի զհայոց աշխարհս ի տառապանք պահեցին, յետոյ բարիշան, եւ կանք դեռ եւս ի կայ(ս)կածի. եւ տէրութիւն Ոստանայ Զէյալ Հանի, որ է Շամոյ. որք հանդիպիք սմա լի բերանով ասացէք զաստուած ողորմին Գրիգորիս Կաթողիկոսին, կապողի նորա, եւ ծնողացն իմոց պարոն Ասքանդարին եւ Գուլանփաշին. ամէն»[13]:

Ձեռագիրը Գրիգորիս Բ կաթողիկոսին պատկանելու եւ 1558 թ. նրա կողմից նորոգուած լինելու այս յիշատակումը վկայում է այն, որ ԺԶ. դարի կէսերին ձեռագիրը գտնուել է Վասպուրականում, հաւանաբար՝ Աղթամարի վանական համալիրում, որտեղ եւ գրուել է յիշատակարանը: Այս փաստերը միաժամանակ խօսում են ձեռագրի նկատմամբ բարձրաստիճան հոգեւորականի եւ իմաստասէր կաթողիկոսի[14] ունեցած յատուկ ուշադրութեան մասին:

Ձեռագրի՝ Վասպուրական տեղափոխուելու հանգամանքներն ու յստակ ժամանակը անյայտ են: Ելնելով Կիլիկիայի հայկական թագաւորութիւնում ստեղծուած պատմական իրավիճակից՝ հնարաւոր է հետեւեալ վարկածն առաջ քաշել. ձեռագրի տեղափոխութիւնը Աղթամարի կաթողիկոսութիւն տեղի է ունեցել Եգիպտոսի սուլթանութեան զօրքերի կողմից Սսի գրաւման կամ համաժամանակեայ այլ դէպքերի արդիւնքում, երբ աւերուել են երկրի բազմաթիւ բերդեր եւ գրչութեան կենտրոն վանքեր[15]:

Եթէ հետեւենք ձեռագրի յիշատակարանների ժամանակագրական յաջորդականութեան թելադրած տրամաբանութեանը, ապա պէտք է ենթադրել, որ ձեռագիրը Գրիգորիս Բ Աղթամարեցուց յետոյ պատկանել է Սիմէոն Ապարանեցուն: Այս մասին է վկայում հետեւեալ յիշատակարանը. «Ես Սիմիոն վարդապետս Ապարանցի զայս գիրս գրեցի»[16]: Սիմէոն Ապարանեցին ծնուել է մօտ 1540-ական թթ. Մոկաց նահանգի Սպարկերտ գաւառի Ապարանք գիւղում, որտեղից յետագայում տեղափոխուել է Քաջբերունեաց գաւառ, Մեծոփի մենաստան[17]: Այստեղ նա աշակերտել է Ներսէս Ամկեցուն, իսկ ապա Ոստանի դպրոցում՝ Յովհաննէս Ոստանեցուն[18], հեղինակել է բազմաթիւ չափածոյ ստեղծագործութիւններ, պատմական ողբեր[19]: Սիմէոն Ապարանեցին, ով ժամանակակիցների յիշատակարաններում յայտնի է որպէս «քաջ ըաբունապետ»[20], Մեծոփում, Կարինում եւ Վանում զբաղուել է մանկավարժական գործունէութեամբ: Նշենք նաեւ, որ Սիմէոն Ապարանեցուն են պատկանել մաթեմատիկական, տոմարական եւ իմաստասիրական բնոյթի մի շարք ձեռագրեր, որոնք նրա կողմից օգտագործուել են ու-

---

5 **Սմբատայ Սպարապետի** *Տարեգիրք*, էջ Ժ- ԺԱ:

6 *La chronique attribuée au* **Connétable Smbat**, p. 13.

7 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 9-12:

8 **Սմբատայ Սպարապետի** *Տարեգիրք*, էջ 254:

9 **Նոյն** տեղում, էջ ԺԲ:

10 *La chronique attribuée au* **Connétable Smbat**, p. 13.

11 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, էջ 11:

12 **Ն. Ակինեան**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920, էջ 125:

13 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, էջ 12:

14 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, Երեւան, 1942, էջ 622:

15 **Ն. Ակինեան**, *Մատենագրական հետազօտութիւններ*, Վիեննա, 1953, հտ. Է, էջ 142. **Հ. Ոսկեան**, *Կիլիկիայի վանքերը*, Վիեննա, 1957, էջ 52-53, 149-150. **Մ. Յովհաննէսեան**, *Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները*, Վենետիկ, 1989, էջ 79:

16 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, էջ 12:

17 **Սիմէոն Ապարանեցի**, *Բանաստեղծութիւններ*, աշխատասիրութեամբ **Կ. Սուքիասեանի**, Երեւան, 1976, էջ 10-11:

18 **Ն. Ակինեան**, *Սիմէոն Վ. Ապարանեցի*,- «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1919, սա. 79-96. **Վ. Յակոբեան**, *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Բ (1621-1640 թթ.), Երեւան, 1978, էջ 152, 377:

19 **Պ. Խաչատրեան**, *Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.)*, Երեւան, 1969, էջ 137-144:

20 **Վ. Յակոբեան**, *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Ա (1601-1620 թթ.), Երեւան, 1974, էջ 522, 625:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

սուցման նպատակով[21]: Ուստի կարելի է ենթադրել, որ ԺԶ. դարում «Տարեգրքի» յիշեալ օրինակը նոյնպէս ծառայել է որպէս դասագիրք:

Մատենագրի ուշադրութիւնը «Տարեգրքի» ձեռագրի նկատմամբ, անշուշտ, պատահական չէ, քանի որ նա յայտնի է նաեւ պատմական որոշ երկերի չափածոյ վերաշարադրմամբ[22]: Համաձայն ԺԷ. դարի մի յիշատակարանի՝ Սիմէոն Ապարանեցին մահացել է 1614 թ. Վան քաղաքում, ուր եւ հաւանաբար անց է կացրել իր կեանքի վերջին տարիները. «...եւ ուսուցանողի նորին քաջ եւ մաքուր Սիմէոն բաբունապետին, որ ՌԿԳ թուականին Հայոց փոխեցաւառ Քրիստոս, ի Շամիրամակերտ մայրաքաղաքին, որ այժմ ասի Վան»[23]: Դժուար է ասել՝ արդեօք ձեռագիրը այդ ժամանակ գտնուել է Վանում, թէ ոչ, սակայն որոշակի է այն, որ ԺԶ. դարի կէսից մինչեւ ԺԷ. դարի սկիզբը այն գտնուել է Աղթամարի կաթողիկոսութեանը պատկանող վանքերից մէկում:

Թիւ 1308 ձեռագրի՝ ուշադրութեան արժանի յաջորդ երկու յիշատակարանները յուշում են, որ ձեռագիրը պատկանել է նաեւ ոմն Գրիգոր Հիզանեցու: Այս մասին են վկայում հետեւեալ գրառումները. «Ես Գրիգորս եմ Հիզանցի, զգրքիկս շատ վայելեցի, այլ յետոյ ում եւ հանդիպի, թող ինձ ասէ Տէր ողորմի» (թղ. 46բ)[24], «Ես Գրիգորս եմ ի Հիզնայ, ձեզ կենդանեացդ հող ու ծառայ, թէպէտեւ ես մարմնով մեռայ, եւ ի ձեր տեսոյն անջատեցայ, դու ողորմի ինձ աղերսեայ, զի յառաջէս տիրի սրմա, մի կայ մնաց ով որ կարդայ» (թղ. 56բ)[25]: Գրիգոր Հիզանեցու մասին կցկտուր տեղեկութիւններ են պարունակում ԺԷ. դարում իր իսկ կողմից տարբեր ձեռագրերում թողած մի շարք յիշատակարաններ, որոնցից պարզ է դառնում, որ նա եղել է Վասպուրականի Մանուկ Սուրբ Նշան վանքի քահանայ[26]: Գրիգոր Հիզանեցին եղել է Սիմէոն Ապարանեցու կրտսեր ժամանակակիցը եւ, հաւանաբար, ձեռագրի յաջորդ ստացողը: Նշենք, որ Գրիգոր Հիզանեցին իր ընդօրինակած ձեռագրերում գրչութեան վայրը յիշատակում է միայն Հիզան քաղաքը[27], հետեւաբար կարելի է ենթադրել, որ ԺԷ. դարում թիւ 1308 ձեռագիրը, պատկանելով Գրիգոր Հիզանեցուն, գտնուել է հէնց Հիզանում:

ԺԹ. դարի վերջում թիւ 1308 ձեռագիրը յայտնւում է արդէն Կոստանդնուպոլսում: Ձեռագրի՝ Կոստանդնուպոլիս տեղափոխուելու հանգամանքներն անյայտ են: Կարելի է ենթադրել, որ դրանում որոշակի դեր են խաղացել ԺԸ.-ԺԹ. դդ. Հիզանի յետադիմելն ու աւերուելը[28]: 1876 թ. Ս. Ալիշանը Յովհաննէս Ներսիսեանից գնում է «Տարեգրքի» այս օրինակը եւ, տեղափոխելով Սբ. Ղազար, նուիրում իր աւագ եղբօրը՝ մեծ հայագէտ Ղ. Ալիշանին: Այս մասին է վկայում հետեւեալ նշումը. «Տարեգիրք Մատթ. Ուռհայեցւոյ եւ Կիլիկեցւոց, ըստ Սմբատայ...: Ընծայեաց Սերովբէ Ալիշան յամի 1876, գնեալ ի Յովհ. Ներսիսեան: Գրիչն Վասիլ կոչի»[29]:

Ընդհանրացնելով նշենք, որ թիւ 1308 ձեռագրի կարճառօտ յիշատակարանները օգնում են ժամանակային եւ տարածական առումներով որոշակիացնել ձեռագրի պատմութեան՝ «Կիլիկեան Հայաստան»

21 Կ. Սուքիասեան, *Սիմէոն Ապարանեցուն պատկանած ձեռագրերը*,- «Բանբեր Մատենադարանի», 10, 1971, էջ 373-378:

22 Կ. Սուքիասեան, *Սիմէոն Ապարանեցու վիպասանութեան աղբիւրները*,- ՀՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, թիւ 8, էջ 30-38:

23 Վ. Յակոբեան, Ն. աշխ., հտ. Ա, էջ 625:

24 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, էջ 12:

25 Նոյն տեղում:

26 Վ. Յակոբեան, Ն. աշխ., հտ. Ա, էջ 312, 430:

27 Նոյն տեղում:

28 *Հայկական համառօտ հանրագիտարան*, հտ. 2, Երեւան, 1995, էջ 510:

29 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ Ժ:

«Վան», «Հիզան» եւ «Կոստանդնուպոլիս» շրջանակները, իսկ եկեղեցական հայրերի կողմից ձեռագրի նկատմամբ յատուկ ուշադրութիւնը եւ ուսումնառութեան նպատակով օգտագործումը վկայում են «Տարեգրքի» բարձր համարում ունենալու մասին:

Բ ձեռագրախումբ.

Լոնդոն, ձեռագիր թիւ 5458 (Երեւան, միկրոժապաւէն, թիւ 360)

Գտնւում է Բրիտանական թանգարանում: Նկարագրուել է Ֆ. Կոնիբերի (1913 թ.)[30] եւ Ա. Մաթեւոսեանի (1963 թ.)[31] կողմից: Ժողովածոյ, թուղթ, թերթ՝ 145 (5գx3⅝, 4գx2գ), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ բոլորգիր, տողերը՝ 16-18, վայր՝ անյայտ, գրիչ՝ Վասիլ, ժամանակ՝ ԺԴ.-ԺԷ. դդ.: Յիշատակարաններ՝ չունի, խորագիր՝ չունի: Բովանդակում է՝ Սմբատ Սպարապետ «Տարեգիրք», «Ժամանակագրութիւնք, ըստ եօթանասնից թարգմանութեան», Հեթում Ախտուց տէր «Համառաւտ պատմութիւն ժամանակաց», «յԱդամայ, մինչեւ ի ծնունդն Քրիստոսի», «Խոստովանութիւն», Վասիլ Մարաջախտ «Ժամանակագրութիւն», Հեթում Բ թագաւոր «Համառօտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց, այսինքն ի Հայոց ի Փռանկաց: ի յունաց յասուրոց, աշխատութեամբ իմոյ ծառայիս աստուծոյ Յովհաննէս սպասաւոր բանին ի թուականին հայոց ՉԽԷ», Հայոց թագաւորների եւ իշխանների կարգը եւ ժամանակագրական առանձին վկայութիւններ: Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» զբաղեցնում է 5ա-116բ եւ 126ա-126բ էջերը: Խորագիրն է «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպօլիս: Եւ Հայոց Մեծաց յայնմ ժամանակի ժամանակագրութիւն»[32]:

Նշենք, որ յետագայում՝ ձեռագիրը վերակազմելիս, աւելացուել են մաքուր թերթեր, հաւանաբար՝ պակասող հատուածները լրացնելու համար, ինչպէս նաեւ գրչագրի առանձին թերթեր իրար են միացուել ոչ ճիշտ, ինչն էլ յանգեցրել է ձեռագրում ընդգրկուած ժամանակագրութիւնների շարադրանքի յաջորդականութեան որոշակի խախտումների:

Յայտնի է, որ ձեռագիրը պատկանել է Բաֆֆուն (1837-1888 թթ.), ում մահից յետոյ, հաւանաբար՝ ԺԹ. դարի վերջին կամ Ի. դարի սկզբին, ընդգրկուել է Բրիտանական թանգարանում[33]:

Երեւան, ձեռագիր թիւ 4584

Պահւում է Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում: Ձեռագիրը նկարագրել է Օ. Եգանեանը 1965 թ.[34]: Ժողովածոյ, թուղթ, թերթ՝ 389 (28x20), գրութիւնը՝ երկսիւն, գիրը՝ նօտրգիր, տողերը՝ 55, վայր՝ Տիգրանակերտ (Ամիթ), գրիչ՝ Աբրահամ երէց, ժամանակ՝ 1668 թ.: Խորագրերն ու սկզբնատառերը՝ կարմիր: Յիշատակարաններ՝ 11ա, 24ա, 36բ, 39բ, 40բ, 48ա, 59ա, 74ա, 92բ, 113բ, 123ա, 128ա, 158ա, 165ա, 171ա, 174ա, 186ա, 193ա, 226ա, 227ա, 232բ, 236ա, 237ա, 326ա, 357ա, 358ա: Ստացողներ՝ Խօջա Աւետիս, Խօջա Սահակ: Ձեռագրի խորագիրն է «Ժողովածու Հայոց պատմագիրների»: Բովանդակում է՝ Մովսէս Խորենացի «Պատմութիւն Հայոց», Ստ. Տարօնեցի «Պատմութիւն ժամանակաց ինքնախօսութեան», Արիստակէս Լաստիւեր-

30 *A Catalogue of the Armenian Manuscripts in the Brithish Museum*, by Frederick Cornwallis Conybeare, London, 1913, N 116, pp. 290-292.

31 Ա. Մաթեւոսեան, *Հեթում Ախտուց տիրոջ եւ Վասիլ Մարաջախտի ժամանակագրութիւնները*,- ՊԲՀ, 4 (23), 1963, էջ 183-202:

32 ՄՄ, միկրոժապաւէն թիւ 360, էջ 3:

33 *A Catalogue of the Armenian Manuscripts in the Brithish Museum*, տիտղոսաթերթին յաջորդող անթուակիր էջ:

34 *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Երեւան, 1965, էջ 1240:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

ցի «Վասն անցից անցելոց», Եւսեբիոս Կեսարացի «Եկեղեցական պատմութիւն», Ագաթանգեղոս «Պատմութիւն Հայոց», «Դաշնաց թուղթ», Մեսրոպ Վայոցձորեցի «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթեւի», Յովհան Մամիկոնեան «Պատմութիւն Տարօնոյ», Փաւստոս Բուզանդ «Պատմութիւն Հայոց», Եղիշէ «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Ստ. Օրբէլեան «Պատմութիւն նահանգին Սիսական», «Պատմութիւն Հացունեաց խաչին», Սոկրատ «Պատմութիւն եկեղեցական», Միխայէլ Ասորի «Համառաւտ ժամանակաց զրոյցք», Վարդան Արեւելցի «Պատմութիւն տիեզերական», «Յիշատակարան թարգմանութեան», Թովմա Մեծոփեցի «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց», «Կիրակոս Բանասէր Վարք Թովմայ Մեծոփեցւոյ», Սմբատ Սպարապետ «Տարեգիրք», Միխայել Ասորի «Ժամանակագրութիւն», Ղեւոնդ «Պատմութիւն Հայոց»:

Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» զբաղեցնում է 365ա-374բ էջերը: Խորագիրն է «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպօլիս եւ Հայոց Մեծաց. յայնմ ժամանակի ժամանակագրութիւն»[35]: Գրչագրում տեղ են գտել էջերի երկու համարակալումներ՝ հին եւ նոր: Նոր համարակալումը, սակայն, չի համապատասխանում տեքստի բովանդակութեան տրամաբանական յաջորդականութեանը: Ստոյգ պէտք է համարել էջերի ներքեւում նշուած համարակալումները, ըստ որի ճիշտ հերթականութիւնը հետեւեալն է. 729, 728, 731, 730, 733, 732, 735, 734, 737, 736, 737, 736, 739, 738, 741, 740, 743, 742, 745, 744, 747, 746: Էջակալման այս խախտումները, հաւանաբար, տեղի են ունեցել ձեռագիրը վերակազմելու ժամանակ՝ թերթերը ոչ ճիշտ կողմով (աջ) իրար միացնելու պատճառով, որից յետոյ տրուել է նոր՝ շարադրանքի յաջորդական հերթականութեանը չհամապատասխանող համարակալումը:

Ձեռագիրն ընդօրինակուելուց յետոյ ստուգուել է գրչի կողմից, ինչի մասին վկայում են լուսանցքներում նշուած լրացումները[36] (ձեռագիրը եւ լուսանցքում կատարուած նշումները գրուած են միեւնոյն ձեռագրով): Լրացումներից զատ, լուսանցքներում կան նշումներ նաեւ շարադրանքի յաջորդականութեան խախտումների մասին[37]: Մասնաւորապէս՝ բաց են թողնուած Դուինի արաբ ամիրա Աբուլասվարի արշաւանքի, սխոլերի դոմեստիկոսի կամ ինչպէս ձեռագրում է գրուած՝ «Դեմեսկլոսի» պարտութեան, հայոց Աշոտ Գ արքային ուղղուած Յովհաննէս Զմշկիկի նամակի, ինչպէս նաեւ վերջինիս վախճանի մասին պատմող հատուածները (թ. 365ա)[38], որոնք գրուած են 366բ-367ա էջերում՝ Վասպուրականի Սենեքերիմ արքայի կողմից իր տիրոյթները Վասիլ կայսրին յանձնելու մասին պատմող հատուածում[39]: Այս «բացթողումները», ի հարկէ, կարելի է վերագրել գրչի անուշադրութեանը, սակայն այն, որ բաց թողնուած հատուածը չի լրացուել լուսանցքում, այլ յայտնուել է բուն տեքստում, բացառում է նրա՝ գրչի աչքից վրիպած լինելու հաւանականութիւնը եւ վկայում, որ այս «թերութիւնը» գալիս է թիւ 4584 ձեռագրի մեզ անյայտ սկզբնագրից:

Հարկ է նշել, որ ձեռագրի յետագայ դարերի պատմութիւնը վերականգնելի հնարաւոր չէ: Յայտնի է միայն, որ ձեռագիրը պատկանել է Կարապետ Եզեանին (1835-1905 թթ.), ում կողմից էլ հաւանաբար ԺԹ. դարի վերջին կամ Ի. դարի սկզբին յանձնուել է Էջմիածնի վանքի գրադարանին: Այս մասին է վկայում ձեռագրում առկայ հետեւեալ գրառումը. «Զայս պատմագրումի ընկալեալ ի Մատենադարան Աթոռոյ ի հանգուցեալ Կարապետ Եզիանէ իբրեւ նուէր...»[40]:

35 ՄՄ, ձեռագիր թիւ 4584, թ. 365բ:

36 ՄՄ, ձեռագիր թիւ 4584, թ. 369ա, 370ա:

37 Նոյն տեղում, թ. 366ա, 366բ:

38 Նոյն տեղում, թ. 365ա:

39 Նոյն տեղում, թ. 366բ-367ա:

Երեւան, ձեռագիր թիւ 1900

Գտնւում է Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում: Նկարագրուել է Օ. Եգանեանի (1965 թ.)[41] եւ Գ. Տէր-Վարդանեանի (2012 թ.)[42] կողմից: Թուղթ, թերթ 62 (23x16,7,19x13), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ շղագիր, տողերը՝ 21-26, վայր՝ Էջմիածին, գրիչ՝ Յովհաննէս Գէորգեան, ժամանակ՝ սեպտեմբեր, 1826 թ.: Խորագրերն ու սկզբնատառերը՝ սեւ: Յիշատակարան՝ 2ա: Խորագիրն է «Սմբատ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտայ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուականն ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոնի Դ, որոյ էր սպարապետ»[43]: Ընդօրինակուել է ՄՄ թիւ 4584 ձեռագրից, «Տարեգրքի» մոսկովեան (1856 թ.) հրատարակութեան[44] հիմքն է:

Սանկտ Պետերբուրգ, ձեռագիր թիւ 40

Պահւում է ՌԴ Գիտութիւնների ակադեմիայի արեւելագիտութեան ինստիտուտում: Նկարագրուել է 2005 թ. Կ. Իւզբաշեանի կողմից: Թուղթ, թերթ 69 (21.6x17.3), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր, տողերը՝ 23: Խորագիրն է «Պատմագրութիւն Հայոց, աշխատասիրեալ ի Սմբատայ սպարապետէ Լեւոնի Դ արքայի Կիլիկիոյ Հայոց, որ առնու զսկիզբն ի չորս հարիւր թուականէն Հայոց՝ ի Գագկայ թագաւորէ որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ եւ շարակարգեալ հասուցանէ զթուականն ՉՀԸ, այն է ամ Տեառն 1329»:

Ընդօրինակուել է ՄՄ թիւ 1900 ձեռագրից 1846 թ., իսկ 1847 թ. Յովհաննէս Շահխաթունեանցի միջնորդութեամբ յանձնուել է Ս. Պետերբուրգի Ասիական թանգարան[45]:

Վենետիկ, ձեռագիր թիւ 1149

Գտնւում է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում: Նկարագրուել է Ս. Ճեմճեմեանի կողմից 1996 թ.[46]: Թուղթ, թերթ՝ 88 (19x24), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր, տողերը՝25, վայր՝ Էջմիածին, գրիչ՝ Գրիգոր Տէր Գրիգորեան, ժամանակ՝ 1840 թ.: Խորագրերն ու սկզբնատառերը՝ սեւ: Յիշատակարան՝1ա, խորագիրն է «Սմբատ Սպարապետ: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտայ Բագրատունւոյ. շարակարգեալ հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոն Դ, որոյ էր սպարապետ»:

Ընդօրինակուել է ՄՄ թիւ 1900 ձեռագրից: Ձեռագրերի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ «Տարեգրքի» այս երկու օրինակները յանգում են մէկը միւսին. նրանք կրում են նոյն խորագրերը, միանման են գրուած նաեւ գրիչների յիշատա-

40 Նոյն տեղում, թ. 1ա:

41 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., էջ 670:

42 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Զ, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012, էջ 457-460:

43 ՄՄ, ձեռագիր թիւ 1900, թ. 2ա:

44 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Զ, էջ 458:

45 *Армянские рукописи в Петербургских собраниях.* Каталог,- "Православный Палестинский сборник". Вып. 41 (104), Санкт-Петербург, Изд-во «Дмитрий Буланин», 2005, стр. 138.

46 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Զ, էջ 289-292:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

կարանները. «Ապա օրինակեցաւ ի Սուրբ Էջմիածին, գրչութեամբ Յովհաննու աբեղայի Գէորքեան, ի 1826, յամսեանն սեպտեմբերի» (թիւ 1900, թ. 2), «Ապա օրինակեցաւ ի Սուրբ Էջմիածին գրչութեամբ Գրիգորի դպրի Տէր Գրիգորեան, ի 1840 ամի, յամսեանն մարտի» (թիւ 1149, թ. 1): Թիւ 1149 ձեռագիրը 1845 թ. Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանին է նուիրել հայագէտ Էժէն Բորէն[47]:

Վենետիկ, ձեռագիր թիւ 1261

Պահւում է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում: Ձեռագիրը 1996 թ. նկարագրել է Ս. Ճեմճեմեանը[48]: *Ժողովածոյ, թուղթ, թերթ՝ 162 (18x23), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր-շղագիր, տողերը՝ 25, վայր՝ Էջմիածին, գրիչ՝ Գրիգոր Տէր Գրիգորեան, ժամանակ՝ 1840 թ.: Խորագրերը՝ սեւ: Յիշատակարան՝ 1ա, խորագիր՝ չունի: Բովանդակում է՝ Սմբատ Սպարապետ «Տարեգիրք», Յանկ եւ Յիշատակարանք հնագիր մատենիցն Սեւանայ (էջ 97-162): «Տարեգիրքը» զբաղեցնում է 1-92 էջերը: Խորագիրն է «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոն Դ, որոյ էր սպարապետ»: Ընդօրինակուել է ՄՄ թիւ 1900 ձեռագրից, ապա՝ տեղափոխուել Վենետիկի Մխիթարեանների մատենադարան*[49]:

Երեւան, ձեռագիր թիւ 4337

Գտնւում է Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում: Նկարագրուել է Օ. Եգանեանի կողմից 1965 թ.[50]: *Ժողովածոյ, թուղթ, թերթ՝ 277 (21x17), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր-շղագիր, տողերը՝ 24-26, ժամանակ՝ 1818, 1840, 1845, 1850, 1851, 1855, 1858 թթ. (ըստ Օ. Եգանեանի նկարագրութեան), վայր՝ Նիկոզիա (ա), Էջմիածին (բ), Երուսաղէմ (գ, է), Սամաթիա (դ, է), գրիչ՝ Յարութիւն սարկաւագ (ա), Գրիգոր Տէր-Գրիգորեան (բ), Պօղոս Պետրոսեան (գ), Եփրեմ Սարգսեան (ե), միւսները՝ անանուն: Խորագրերն ու սկզբնատառերը՝ սեւ: Յիշատակարան՝ 119բ (1818 թ.), 2ա (1840 թ.), 137ա (1845 թ.), 222ա (1850 թ.), 188ա (1851 թ.), 263ա (1855 թ.), 269բ (1858 թ.): Բովանդակում է՝ Սմբատ Սպարապետ «Տարեգիրք», Եփրեմ Սսեցի «Մեկնութիւն մարգարէութեանն Յովնանու», «Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոսի հայոց», «Թուղթ Յովհաննու արքեպիսկոպոսի Նիկիոյ առ Զաքարիա կաթողիկոս հայոց», Ներսէս Լամբրոնացի «Մեկնութիւն Հայր մեր», Գրիգոր Մագիստրոս «Զափաբերականք», Աբու-Սաիդ «Յաղագս կազմութեան մարդոյ», «Յաղագս իմաստասիրութեան», Գրիգոր վարդապետ «Նկարագիր հրովարտակի», Պ. Ալթունեան «Պտուղ ցանկալի», Վազերիոս Դատոն «Վասն բարւոք կենցաղավարելոյ», «Խրատք», «Երգ առ Ս. Յակոբ», Պօղոս Պետրոսեան «Տեղագրութիւն Շիրակայ», «Սիբիլլական գուշակութիւն» (թարգմ. գերմաներէնից), «Կանոն վերջին օծման», Վանական վարդապետ «Զինչ կ ճրագալուցին լուցանելն»: «Տարեգիրքը» զբաղեցնում է 2ա-40բ էջերը: Խորագիրն է «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լեւոն Դ արքայի տանն Կիլիկիոյ, գունդստապլ ա-*

47 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ Ը, ԺԱ:

48 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, էջ 291-294:

49 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ ԺԱ:

50 *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա, էջ 1194-1195:

նուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոնի Դ, որոյ էր սպարապետ»[51]:

Նշենք, որ ժողովածոյում ընդգրկուած երկերի ընդօրինակման տարեթուերի ըստ հերթականութեան դասաւորուածութիւնը (1840 թ., 1818 թ., 1845 թ., 1851 թ., 1850 թ., 1855 թ., 1858 թ.) յուշում է, որ դրանք չէին կարող յաջորդաբար արտագրուած լինել վերը նշուած գրիչների կողմից: Ձեռագրի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այն չէր կարող ստեղծուել նաեւ տարբեր վայրերում, զանազան տարեթուերին ընդօրինակուած աշխատութիւնների միակցման կամ վերակազմման միջոցով: Ձեռագրի քննութեան արդիւնքում պարզ է դառնում, որ նրանում իւրաքանչիւր յաջորդ պրակ նախորդի անմիջական շարունակութիւնն է, հետեւաբար՝ այն ստեղծուել է որպէս մէկ ամբողջական ձեռագիր: Պէտք է ենթադրել, որ երկերը ընդօրինակելիս արտագրուել են նաեւ նրանց կից յիշատակագրութիւնները, ինչն էլ շփոթի տեղիք է տուել ժողովածոն՝ Յարութիւն սարկաւագի, Գրիգոր Տէր-Գրիգորեանի, Պօղոս Պետրոսեանի, Եփրեմ Սարգսեանի եւ այլոց անմիջական ընդօրինակութիւնները համարելու համար:

Նշենք նաեւ, որ գրիչների ձեռագրերի բաղդատութիւնը ցոյց է տալիս, որ թիւ 4337-ը արտագրուել է յաջորդաբար մի քանի գրիչների կողմից: Մասնաւորապէս՝ առաջին գրիչն ընդօրինակել է 1-40բ էջերը (գիրը՝ նօտրգիր, թանաքը՝ սեւ), երկրորդ գրիչը՝ 43ա-119բ էջերը (գիրը՝ մանր նօտրգիր, թանաքը՝ շագանակագոյն), երրորդ գրիչը՝ 122ա-216բ էջերը (գիրը՝ շղագիր, թանաքը՝ սեւ), այնուհետեւ շարունակել է կրկին երկրորդ գրիչը՝ գրելով 223ա-253բ էջերը (գիրը՝ մանր նօտրգիր, թանաքը՝ կրկին շագանակագոյն), իսկ չորրորդ եւ հինգերորդ գրիչները գրել են ձեռագրի վերջին՝ համապատասխանաբար 258ա-263ա (գիրը՝ շեղագիր, թանաքը՝ սեւ) եւ 265ա-270ա էջերը (գիրը՝ շեղագիր, թանաքը՝ սեւ): Այսպիսով՝ ձեռագրի ստեղծման վրայ աշխատել է հինգ գրիչ, ընդ որում, դատելով ընդօրինակողների թուից՝ գրչութեան որեւէ մեծ կենտրոնում:

Վիեննա, ձեռագիր թիւ 104 (հին թիւ՝ 54 Ա.)

Գտնւում է Վիեննայի Մխիթարեան մատենադարանում: Նկարագրուել է Յ. Տաշեանի կողմից 1895 թ.[52]: *Թուղթ, թերթ՝ 64 (21.5x17.5, 16.5x12.5), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր, տողերը՝ 20, գրիչ՝ անյայտ, ժամանակը՝ ԺԹ. դար: Յիշատակարան՝ 1ա: Խորագիրն է «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լեւոն Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոն Դ, որոյ էր սպարապետ»:*

Ըստ Յ. Տաշեանի՝ այս ձեռագիրը քիչ է տարբերւում Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» Կ. Շահնազարեանի հրատարակութիւնից եւ ընդօրինակուել է Փարիզի ու Մոսկուայի հրատարակութիւնների համար հիմք հանդիսացած էջմիածնի ձեռագրի օրինակից հանուած երկրորդ օրինակից[53]: *Ձեռագիրը Վիեննայի Մխիթարեանների հաւաքածոյի մէջ է ընդգրկուել 1845-1867 թթ.*[54]:

51 ՄՄ, ձեռագիր թիւ 4337, թ. 2ա:

52 *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, կազմեց՝ Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 376-377:

53 *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, էջ 377:

54 Նոյն տեղում, էջ 336:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

Զմմառ, ձեռագիր թիւ 469 (հին թիւ՝ ԾԶ)

Գտնւում է Զմմառի վանքի մատենադարանում, նկարագրուել է Ն. Ակինեանի եւ Հ. Ոսկեանի կողմից 1971 թ.[55]: Թուղթ, թերթ՝ 56 (22.5x14.5, 18x10.5), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր-չղագիր, տողերը՝ 22, վայր՝ Էջմիածին, գրիչ՝ Գրիգոր Տէր Գրիգորեան, ժամանակ՝ 1840: Խորագրերը՝ սեւ: Ցիշատակարան՝ 1ա: Խորագիրն է. «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունսդտապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոն Դ, որոյ էր սպարապետ»:

Ձեռագիրը նախապէս ընդգրկուած է եղել Անտոնեան Միաբանութեան հաւաքածոյի մէջ, իսկ Ի. դարի առաջին քառորդում՝ միաբանութեան գոյութեան դադարելուց յետոյ, ի թիւս այլ ձեռագրերի Կոստանդնուպոլսից տեղափոխուել է Զմմառի վանքի գրադարան[56]: Նշենք նաեւ, որ թիւ 469 ձեռագիրը չի յիշատակւում մինչեւ 1924 թ. վանքում գտնուող ձեռագրերի ցուցակում[57], հետեւաբար՝ այն Զմմառ է տեղափոխուել 1924 թ. յետոյ:

Երուսաղէմ, ձեռագիր թիւ 521

Գտնւում է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքում: Նկարագրուել է Ն. Պողարեանի կողմից 1967 թ.[58]: Ժողովածոյ թուղթ, թերթ՝ 356 (22x18x2), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր-չղագիր, տողերը՝ 25-27, վայր՝ Կոստանդնուպոլիս, գրիչ՝ Սերովբէ Պետրոսեան, ժամանակ՝ 1851 թ.: Խորագրերը՝ սեւ: Ցիշատակարան՝ 191(ա), 2(բ), 93(գ): Բովանդակում է՝ Սեբէոս «Պատմութիւն Հերակլի» (էջ 3-191), Սմբատ Սպարապետ Պատմագիրք(ա), Սմբատ Սպարապետ Պատմագիրք(բ):

Սմբատ Սպարապետ. Պատմագիրք (ա)-ն զբաղեցնում է 2-72 էջերը: Խորագիրն է «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունսդտապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոն Դ, որոյ էր սպարապետ»: Ձեռագիրը ընդօրինակուել է Գրիգոր Տէր Գրիգորեանի՝ 1840 թ. արտագրուած ձեռագրից կամ նրանից հանուած մէկ այլ օրինակից 1851 թ., իսկ 1861 թ. սեպտեմբերի 12-ին՝ նուիրուել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքին[59]: Ձեռագրում առկայ է «Տարեգրքի» եւս մէկ օրինակ՝ Պատմագիրք (բ), որը զբաղեցնում է վերջին՝ 1-93 էջերը: Խորագիրը, բովանդակութիւնն ու ընդօրինակման հանգամանքները նոյնն են[60]:

Փարիզ, ձեռագիր թիւ 229 (հին թիւ՝ 102)

Պահւում է Ֆրանսիայի ազգային գրադարանում: Նկարագրուել է Ռ. Գեւորգեանի եւ Ա. Տէր-Ստեփանեանի կողմից 1998 թ.[61]: Թուղթ, թերթ՝ 106 (145x200), գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր, տողերը՝ 22, գրիչ՝ անյայտ, ժամանակ՝ ԺԹ. դար: Ցիշատակարան՝ 1, 105-106: Խորագիրն է «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունսդտապլ անուանեալ, սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուական ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոնի Դ, որոյ էր սպարապետ»:

Ձեռագիրը պատկանել է Յովհաննէս Զամուրճեանին, այնուհետեւ ձեռք է բերուել հայագէտ Է. Դիւլորիէի կողմից, իսկ նրա մահից յետոյ վաճառուել է Ֆրանսիայի ազգային գրադարանին[62]: Ձեռագիրը հաւաքածոյի մէջ է ընդգրկուել 1868 թ. հոկտեմբերի 9-ին[63]:

Վենետիկ, ձեռագիր թիւ 542

Պահւում է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում: Նկարագրուել է Ս. Ճեմճեմեանի կողմից 1996 թ.[64]: Պատառիկ, թուղթ, թերթ՝ 21, գրութիւնը՝ միասիւն, գիրը՝ նօտրգիր, տողերը՝ 17, ժամանակ՝ ԺԶ. դար, վայր՝ անյայտ, գրիչի եւ ստացողների մասին տեղեկութիւններ չկան: Խորագրերն ու սկզբնատառերը կարմիր են: Ձեռագիրը բովանդակում է Սմբատ Սպարապետի «Տարեգրքից» համառօտ հատուած (1213-1327 թթ.):

«Տարեգրքի» ձեռագրերի ուսումնասիրումը ի յայտ է բերում խմբագրական բնոյթի մի շարք տարբերութիւններ, որոնք ստիպում են գրչագրերը դասակարգել երկու խմբում՝ Ա (Վենետիկ, թիւ 1308) եւ Բ (Լոնդոն, թիւ 5458, Երեւան, թիւ 4548, Վենետիկ, թիւ 542, Երեւան, թիւ 1900, Սանկտ Պետերբուրգ, թիւ 40, Վենետիկ, թիւ 1261, Վենետիկ, թիւ 1149, Երեւան, թիւ 4337, Փարիզ, թիւ 229, Երուսաղէմ, թիւ 521 (պարունակում է երկու օրինակ), Զմմառ, թիւ 469, Վիեննա, թիւ 104):

Ա եւ Բ ձեռագրախմբերի միջեւ առկայ են կառուցուածքային եւ լեզուաոճական մի շարք տարբերութիւններ:

ա) Ա խմբում տեքստը սկսւում է «մեզ հարկատու. առին ի մէնջ զօրավար եւ ետուն մեզ գիր ծառայութեան» բառերով եւ ընդհատւում է 1272 թ. դէպքերի նկարագրումով (թերթերն ընկած լինելու պատճառով): Բ խմբի ձեռագրերում դէպքերի շարադրանքը սկսւում է 951 թ. եւ աւարտւում 1331 թ.:

բ) Ա խմբի ձեռագրում շարադրանքը ներկայացւում է ըստ հարիւրամեակների, մասնաւորապէս՝ «Պատմութիւն Շ թուականին, զինչ գործեցաւ ի նմա», «Պատմութիւն Ո թուականին», «Պատմութիւն Զ թուականին, թէ զինչ գործեցաւ ի նմա»: Բ խմբի ձեռագրերը չունեն թիւ 1308-ին բնորոշ կառուցուածքային այս առանձնայատկութիւնը:

գ) Թիւ 1308 ձեռագրի լեզուն պարզ գրաբարն է, իսկ Բ խմբի ձեռագրերի լեզուն թէեւ նոյնպէս գրաբարն է, սակայն լայնօրէն գործածւում են միջին հայերէնին յատուկ քերականական իրողութիւններ: Ուշադրութեան են արժանի նաեւ այն բազմաթիւ յաւելում-յապաւումները, որոնցով մի խմբի ձեռագրերը էապէս տարբերւում են միւս խմբի ձեռագրերից: Մասնաւորապէս՝ Բ խմբի ձեռագրերում յապաւուած են Պետրոս Գետադարձ կաթողիկոսի՝ Վասպուրական տեղափոխուելու, Յովհաննէս-Սմբատ արքայի կողմից նրա յետ կանչուելու եւ Բջնիում բանտարկուելու, այնուհե-

55 *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին*, հտ. Բ, կազմեցին՝ **Ն. Ակինեան, Հ. Ոսկեան**, Վիեննա, 1971, էջ 66:

56 *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին*, հտ. Բ, տիտղոսաթերթին յաջորդող անթուակիր էջ:

57 *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին*, կազմեց **Մեսրոպ վրդ. Քէշիշեան**, Վիեննա, 1964:

58 *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հտ. Բ, կազմեց՝ **Ն. Պողարեան**, Երուսաղէմ, 1967, էջ 522-527:

59 *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հտ. Բ, էջ 525:

60 Նոյն տեղում:

61 *Manuscrits arméniens de la Bibliotheque nationale de France*, **R. Kevorkian, A. Ter-Stepanian**, Paris, 1998, p. 794.

62 Նոյն տեղում, էջ XXXIII:

63 Նոյն տեղում, էջ 794:

64 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Զ, էջ 77-80:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

տեւ կաթողիկոսական աթոռին վերահաստատուելու, Ալփ Արսլանի սպանութեան, Մելիքշահի թագադրման, Գրիգոր Մագիստրոսի որդու՝ Անտիոքի դուքս Վասակ Պահլաւունու սպանութեան եւ մի շարք այլ հատուածներ: Միւս կողմից՝ աւելացուած են 1036/1037 եւ 1176 թթ. արեւի խաւարումների, Թորոս իշխանի կողմից Գագիկ Բ արքայի սպանութեան վրէժն առնելուց յետոյ Կիզիստրա բերդի բնակիչներին Պառատիս գետի ափին վերաբնակեցնելու հատուածները: Բացի նշուածներից, Բ խմբի բոլոր ձեռագրերի համար ընութագրական են Սմբատ Սպարապետի՝ «Տարեգրքի» հեղինակը լինելու մասին յիշատակումները, որոնք բնորոշ են միայն այս խմբի ձեռագրերին: Իր հերթին թիւ 1308 ձեռագրում կան մի շարք յաւելումներ, որոնք չենք գտնում Բ խմբի գրչագրերում:

Նշենք, որ երկու խմբերի ձեռագրերում տեղ գտած տարբերութիւնների վերլուծութիւնը, ինչպէս նաեւ՝ դրանց համադրումը «Տարեգրքի» սկզբնաղբիւր Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հետ կարեւորութիւն է ներկայացնում այն առումով, որ թոյլ է տալիս պարզել՝ արդեօք Ա եւ Բ խմբերի սկզբնագրերը յանգում են մէկը միւսին, թէ ստեղծուել են որպէս միեւնոյն աշխատութեան ինքնուրոյն խմբագրութիւններ:

Բերենք մէկ օրինակ. անդրադառնալով հայերի նկատմամբ Բիւզանդիայի վարած քաղաքականութեան հետեւանքներին՝ Մատթէոս Ուռհայեցին գրում է. «...որ ի մէկ տարւոյ հասան մինչեւ ի դուռն Կոստանդնուպօլսի եւ առին զամենայն աշխարհն Հոռոմոց, զքաղաքս ծովեզերաց եւ զկղզիս նոցա եւ արարին զազգն Յունաց որպէս զբանտարկեալս ի ներս ի Կոստանդնուպօլիս»[65]:

«Տարեգրքի» Ա եւ Բ խմբերում (այսուհետեւ համեմատութիւններում բնագիրը մէջբերւում է ըստ Բ խմբի՝ մեր տրամադրութեան տակ գտնուող ամենահին թիւ 4584 ձեռագրի) այս հատուածը հետեւեալ տեսքն ունի.

Թիւ 1308

«...զի ի ա ամն զայս ամենայն աշխարհս առին ի նոցանէ, եւ ինքեանք փախստականք անկան ի Կոստանդինուպօլիս» (թ. 34ա):

Թիւ 4584

«...որ ի մէկ տարին հասան մինչեւ ի դուռն Կոստանդնուպօլսի. եւ առին զամենայն քաղաքսն ծովեզերովն եւ զկղզիս նոցա. եւ արարին զնոսա զէտ զընտանաց ի Կոստանդնուպօլիս» (թ. 369բ):

Վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Բ խմբի հաղորդումն աւելի հարազատ է աղբիւրին, հետեւաբար նաեւ՝ «Տարեգրքի» սկզբնագրին, իսկ Ա խմբինը՝ իր հակիրճ եւ ընդհանրացուած ձեւով, տարբերւում է թէ՛ մէկից եւ թէ՛ միւսից, ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ սկզբնագրի այս հաղորդումը խմբերում մշակուել է միմեանցից անկախ: Համադրենք եւս մէկ հատուած.

Մատթէոս Ուռհայեցի

«... եւ Մանիակն կայր ի մեծ վտանգի: Եւ զկնի այսորիկ թագաւորն Ռոմանոս խորհեցաւ շալկով հաց արկանել ի քաղաքն: Եւ գնային ի գիշերի վաթսուն հազար Հոռոմ կոնդորածք, անցան ընդ Եփրատ գետն եւ գային ի յՈւրհա. իսկ այլ չէն ոչ գոյր ի գաւառն Ուրհայոյ, բայց միայն Լտարն. յորժամ հասին ի Պարսուրհարաւ Շիպիպն ի վերայ նոցա եւ մինչեւ ի Դեսնաձորն կոտորեաց զվաթսուն հազար կոնդորատսն. եւ այսպիսի նեղութեամբ կայր Ուրհա, մինչեւ զօրացաւ քաղաքն եւ յաղթահարեաց զթշնամիսն. եւ արար ընդ նոսա սէր, եւ եղեւ խաղաղութիւն ի վերայ

65 Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 136:

Ուրհայոյ, եւ դադարեալ եղեւ հալածանք քրիստոնէից: Այս ամենայն եղեւ ի թագաւորութեան Աշոտոյ Բագրատունւոյ եւ ի հայրապետութեանն Տէր Պետրոսի Հայոց կաթողիկոսի: Եւ յաւուրս Տուղրիլ Սուլթանին Պարսից տէրութեանն առաւ ի Տաճկաց քաղաքն Ուրհա: Իսկ յետ այս ամենայն անցիցս եւ նեղութեանցս եւ չարչարանացս, զոր կրեաց քաջն Մանիակ, փոխեաց զնա Ռոմանոս եւ տայ զՈւրհա Ապուքաքայ վրանպահուն Դաւթի Կուրապաղատին»[66]:

Ա եւ Բ խմբերում ունենք այսպիսի պատկեր.

Թիւ 1308

«Իսկ Մանիակ ի վտանգի կայր զօրքն ի սովոյ, եւ ոչ կարէին գտանել կերակուր, եւ հրամանաւ թագաւորին տանէին շալակաւ ցորեան ի գիշերի ածեալ ի քաղաքն: Եւ իմացեալ Տաճիկքն կոտորեցին զնոսա եւ առին զցորեանն. եւ Մանիակն կայր ի մեծ վտանգի մինչեւ արար թագաւորն սէր ընդ նոսա, եւ եղեւ խաղաղութիւն մեծ եւ լցաւ քաղաքն հացիւ: Այս եղեւ ի թագաւորութեանն Ռոմանոսի, եւ ի թուին Հայոց ՆՁ» (թդ. 13ա-13բ):

Թիւ 4584

«Իսկ Մանիակն ի վտանգի էր, եւ զօրքն ի սովոյ նեղեալ չգտանէին կերակուր. եւ հրամանաւ թագաւորին տանէին դեսպանք շալկով ի գիշերի ցորեն շատ ի քաղաքն եւ իմացան տաճիկքն եւ սպանին զամէնն եւ առին զցորենն, եւ Մանիակն ի տագնապ էր, մինչեւ արար թագաւորն ընդ նոսա սէր. եւ եղեւ խաղաղութիւն մեծ: Եւ այս եղեւ ի թագաւորութեանն Ռոմանոսի ի թուին ՆՁ: Իսկ յետ շատ նեղութեանց զոր կրեաց Մանիակ, փոխեաց զնա Ռոմանոսն. եւ ետ զուռհա Ապուպաքա վրանապահին Դաւթի կուրապաղատին» (թդ. 367բ):

Պարզորոշ երեւում է, որ Ա եւ Բ խմբերում «Տարեգրքի» սկզբնագիրը խմբագրուել է միմեանցից անկախ: Այս մասին են վկայում մի կողմից՝ նշուած օրինակների առաջին հատուածի գրեթէ նոյնական նմանութիւններն ու տարբերութիւնները՝ համեմատած սկզբնաղբիւր Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հետ, իսկ միւս կողմից՝ թիւ 4584 ձեռագրից բերուած եւ թիւ 1308-ում բացակայող վերջին հատուածի գրեթէ բառացի համընկնումը սկզբնաղբիւրի հետ: Հետեւաբար՝ Ա եւ Բ խմբերը չեն ծագում մէկը միւսից, ինչպէս կարող է թուալ առաջին հայեացքից, այլ, ընդհանուր սկզբնագրին յանգելով, որպէս ինքնուրոյն խմբագրութիւններ, ներկայացնում են «Տարեգրքի» ձեռագրերի երկու տարբեր «ճիւղեր»:

Հարկ է նշել, որ նման զուգահեռները, «Տարեգրքի» ձեռագրախմբերի յարաբերակցութիւնը պարզելուց զատ, ուրուագծում են նաեւ դրանց սկզբնագիրը: Այս առումով ուշադրութեան են արժանի ոչ միայն ձեռագրերի՝ սկզբնաղբիւրի հետ համընկնող, սակայն միմեանցից տարբերուող հատուածները, այլեւ՝ ընդհանուր ընթերցումները:

Ներկայացնելով Բջնի ամրոցի մօտ տեղի ունեցած ճակատամարտը՝ Մատթէոս Ուռհայեցին գրում է. «Յայնժամ սպառազինեալ մեծի իշխանին Գրիգորի որդի Վասակայ Պահլաւունւոյ եւ երթեալ զօրօք բանակս հարկանէր ի վերայ գետոյն Հուրաստանի մերձ ի Բջնի մեծի ամրոցին»[67]:

Ա եւ Բ ձեռագրախմբերում նշուած հատուածը խմբագրուել է հետեւեալ կերպ.

66 Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 64:

67 Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 88:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

Թիւ 1308

«Եւ յայնժամ սպառազինեալ մեծն Գրիգորիս Պահլաւունին, որդին Վասակայ, եւ երթեալ բանակ հարկանէր ի վերայ Ախուրան գետոյ, մերձ յամուրն Բջնի» (թղ. 19ա):

Թիւ 4584

«Յայնժամ սպառազինեալ մեծն Գրիգորիոս Պահլաւունին որդին քաջին Վասակայ. եւ երթեալ բանակ հարկանէր ի վերայ Ախուրեան գետոյ մերձ յամուրն Բջնի» (թղ. 367ա):

Ճիշտը, անշուշտ, Մատթէոս Ուռհայեցու յիշատակած Հուրաստանն է (Հրազդան), իսկ «Տարեգրքի» խմբագրութիւններում նշուած Ախուրեանն ակնյայտ սխալ պէտք է համարել: Սակայն այստեղ կարեւորը ոչ թէ սա է, այլ՝ ձեռագրախմբերում ընդհանուր սխալ ընթերցման փաստը: Քիչ հաւանական է թւում, որ առանձին խմբերի պատկանող ձեռագրերում միմեանցից անկախ կարող էր տեղ գտնել միեւնոյն սխալը: Ուստի պէտք է ենթադրել, որ այս, ինչպէս նաեւ այլ (Մատթէոս Ուռհայեցի, էջ 88/թիւ 1308, թ. 19ա/թիւ 4584, թ. 367ա. Մատթէոս Ուռհայեցի, էջ 96/թիւ 1308, թ. 22ա/ թիւ 4584, թ. 368բ եւ այլն)՝ «Ժամանակագրութեան» հետ չհամընկնող, սակայն «Տարեգրքի» ձեռագրախմբերի համար ընդհանուր ընթերցումները ծագում են «Տարեգրքի» սկզբնագրից՝ արտացոլելով հէնց նրա առանձնայատկութիւնները:

Հարկ է անդրադառնալ նաեւ այն հարցին, թէ ինչպէս է ստեղծուել «Տարեգրքի» ձեռագրերի հիմնական ճիւղը ներկայացնող Բ խմբագրութիւնը: Նշենք, որ երկի առաջին հատուածում Ա եւ Բ խմբերը քիչ են տարբերւում միմեանցից. խմբագրական միջամտութիւնը առաւել նկատելի է աշխատութեան երկրորդ մասում, որում յատկապէս 1216-1272 թթ. պատմութիւնը ներկայացնող հատուածները ըստ խմբերի այնքան են տարբերւում միմեանցից, որ երբեմն կարող են նաեւ ինքնուրոյն բնագրեր թուալ:

Ներկայացնենք մէկ օրինակ. 1216 թ. Լեւոն Բ արքայի կողմից Անտիոքի գրաւումը թիւ 1308 ձեռագիրը այսպէս է նկարագրում.

«... Էառ թագաւորն Լեւոն զԱնտիոք արուեստիւ եւ իմաստութեամբ, քանզի զոր յառաջագոյն մեծաւ պատերազմաւ ոչ կարաց ածել ի հաւանութիւն, յետոյ առատաւոր պարգեւօք եւ խոստմամբ հաւանեցոյց զոմանս յիշխանացն, եւ նոքա բացին նմա զդրունս ի գիշերի, յոր եմուտ բազում զօրութեամբ, եւ էառ զդրունսն եւ զամենայն աշտարակս պարսպին շուրջանակի, եւ ելից զփողոցամէջս քաղաքին զօրօք բազմութեամբ, եւ բնակիչք քաղաքին ոչ գիտէին: Եւ յորժամ եղեւ առաւօտ՝ տեսին զքաղաքն լցեալ զօրօք եւ ապշեալ յիմարեցան եւ ոչինչ վնաս եղեւ ումէք, եւ ոչինչս յափշտակեալ... Իսկ թագաւորն Լեւոն հասեալ յայսպիսի գործոյ կատարումն ցնծայր եւ յոյժ ուրախ էր ընդ աստուածային յաջողումն, քանզի որում յառաջագոյն ինքեանք ծառայէին արար զնա ի ներքոյ իշխանութեան իւրոյ...»[68] :

Նոյն հատուածը Բ խմբում ներկայացուած է հետեւեալ կերպ.

«... Էառ թագաւոր Լեւոն զԱնտաք ի մաստութեամբ, զի առատ պարգեւօք խոստմամբ հաւանեցոյց զոմանս յիշխանացն. եւ նոքա բացին զդուռն գիշերն, յորում եմուտ շատ զօրօք»[69]:

Բ խմբի բնագրի կազմողը կրճատում է Լեւոն Բ արքայի կողմից Անտիոքի գրաւման մանրամասները՝ փոխանցելով միայն դրուագի հիմնական բովանդակութիւնը: Մէկ այլ դէպքում նա իսպառ յապաւում է թիւ 1308 ձեռագրում մօտ երկու

68 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 219:
69 ՄՄ, ձեռագիր թիւ 4584, թ. 371ա:

էջ զբաղեցնող Լեւոն Բ արքայի մահուան մասին պատմող ընդարձակ հատուածը: Նշենք, որ կազմողի (խմբագրի) կողմից նման վերաբերմունքի հանդիպում ենք նաեւ Կիլիկեան Հայաստանի գահի յաւակնորդ Ռուբէն-Ռայմունդի մասին հաղորդուող տեղեկութիւնների առումով: Մասնաւորապէս՝ նա լռում է Ռուբէն-Ռայմունդի՝ Լեւոն Բ արքայի կողմից Կիլիկեան Հայաստանի գահաժառանգ ճանաչուելու[70], Անտիոքի դքսութիւնում կարճատեւ գահակալելու[71] եւ մի շարք այլ դրուագների մասին: Այստեղ օրինաչափ է այն հարցադրումը, թէ ինչպիսին է Ռուբէն-Ռայմունդի մասին պատմող հատուածների յարաբերակցութիւնը «Տարեգրքի» Ա եւ Բ ձեռագրախմբերում: Հաշուարկը ցոյց է տալիս, որ առաջինում Ռուբէն-Ռայմունդը յիշատակւում է վեց[72], իսկ երկրորդում՝ ընդամէնը մէկ[73] անգամ: Այս յապաւումներն, անշուշտ, կարելի է վերագրել խմբագրի՝ տեքստը կրճատելու մտադրութեանը, սակայն յապաւուած դրուագների, ինչպէս նաեւ յաւելուած հատուածների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ դրանք ամենեւին էլ պատահական չեն: Ակնյայտ է, որ խմբագիրն աւելորդ է համարում յապաւուած հատուածները, սակայն ինչո՞վ է պայմանաւորուած նրա կասկածելի լռութիւնը այս հարցում: Հաւանական պատճառը պէտք է փնտրել խմբագրի դիրքորոշման մէջ: Այսպէս՝ նիւթի վերլուծութիւնը բաւականին պարզ պատկեր է բացում՝ Լեւոն Բ արքայի եւ Ռուբէն-Ռայմունդի վերաբերեալ մի շարք հատուածների կրճատումը կատարուած է ի հակակշիռ Կոստանդին պայլի մասին պատմող յաւելեալ տեղեկութիւնների:

Բերենք մէկ օրինակ. ներկայացնելով 1216 թ. Շողակաթ ամրոցի մօտ Իկոնիայի սուլթանութեան եւ հայկական զօրքերի միջեւ տեղի ունեցած ճակատամարտը՝ թիւ 1308 ձեռագիրը յայտնում է. «Իսկ յորժամ էառ զԱնտիոք Քայքաւուզ սուլտանն յիկոնիոյ՝ խռովեցաւ ընդ նմա, եւ եկն բազում զօրօք ի վերայ Կապանուն, նեղեաց զնա եւ ոչինչ կարաց առնել»[74]:

Նոյն հատուածը թիւ 4584 ձեռագրում ներկայացուած է հետեւեալ կերպ.

«Եւ ի ժամանակս Լեւոնի ժողովեաց զոր սուլտան Կօնին. որ էր ի սալչուքեցն, որ անուն է Ազըտին Քայքայուզ: ... Նա սուլտանն երէկ, սղարեաց զԿապանն զբերդն. նա զպարոն Կոստանդին սպարապետն եւ զպարոն Ատանն պայլ թագաւորն Լեւոն եդ զօրագլուխ. որ առին զամէն Հայոց հեծեալն, եւ գնացին, իջան ի Շողականն վերեւ ի լեռան: Եւ սուլտանն սկսաւ սերտ կռուիլ ի վերայ բերդին: ... Նա պարոն Կոստանդին գունդստապլն ընդդէմ գնաց, եւ եզարկ զիւրեանք իւր զօրօքն ու խառնեցաւ. ու պարոն Ատանի զօրքն չօգնեաց իւրեանց, հայնց որ շատ որ Թուրք»[75]:

Խմբագրի համար Կոստանդին պայլը, անկասկած, գործողութիւնների առաջին պլանում է, իսկ Լեւոն Բ Մեծագործը, որը «ի ծերութեան ... ցաւոտեալ էր ի նկրիսէն, եւ աւերեալ էր ձեռքն ու ոտքն»[76], մնում է ստուերում: Կոստանդին պայլը իրադարձութիւնների կենտրոնում է յայտնւում նաեւ Լեւոն Բ արքայի մահից յետոյ՝ գահաժառանգ Զաբէլի ամուսնութեան հարցում: Ահա թէ ինչպէս է այս դրուագը ներկայացնում Բ ձեռագրախումբը կազմողը. «Բայց պարտ է դառնալ ի Կիլիկիոյ զրոյցն. եւ գրել. զի պարոն Կոստանդին պայլս. ժողովեաց զամէն եկեղեցականքն եւ զօրքն Հայոց եւ ասաց. թէ «պարոնայք դուք գիտէք թէ յինչ նեղութեան գտի

70 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 216:
71 Նոյն տեղում, էջ 219:
72 Նոյն տեղում, էջ 207, 216, 217, 219, 220:
73 ՄՄ, ձեռագիր թիւ 4584, թ. 371բ:

74 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 221:
75 ՄՄ, ձեռագիր թիւ 4584, թ. 372ա-372բ:
76 Նոյն տեղում, թ. 372ա:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

զաշխարհս ու զմեր պարոնին յետամնացքն, ու Աստուծով ինչուի յայս բերի. ու մեր պարոնի դուստրս կարգման եղաւ ամ ամէնդ թապտիրուեցէք որ մեզ պարոն բերեմք. զի ես ուզեմ որ իմ տան եւ իմ որդւոցն անդորրութիւն առնեմ: Նա ամէնն թապտիրուեցան շատ օրեր, եւ հայնց պատահեցին որ քան ի յայլ տեղաց բերեն պարոն Ալաւդին զԱնտաքոյ բընձին որդին զՖիլիպն զի ի մօտս է եւ լաւ կարէ օգնել մեզ ի մեր ամէն կարիք: Ի թուին ՈՀԱ բերին ի պոման որ հայենակ կենայր, ու զեկեղեցին եւ զսեղանն հայենակ տանէր, եւ զամէն մարդ յիւր իրաւունքն պահէր, երբ մեծացաւ եւ եղեւ ի տարոյ, նա իւր հօրն թէպտրով կ՚ուզէր որ ձգէր զհայոց զամէն իշխանքն, եւ իւրոցն դնէր այնչափ որ չկարացին ուժելիր. բռնեցին զինքն ի Թիլն եւ յաթոռոյն ձգեցին, եւ արարին բերդարգել ուր մեռաւ: Եւ այլ վայր դրին պայլ զպարոն Կոստանդին»[77]:

Այս հատուածից արդէն իսկ իրեն զգացնել է տալիս խմբագրի դիրքորոշումը. նրա ուշադրութեան կենտրոնում Կոստանդին պայլն է, մինչդեռ թիւ 1308 ձեռագրի միեւնոյն հատուածում Կոստանդին պայլը առհասարակ չի յիշատակւում. «Իսկ ի թուին ՈՀԱ փեսայացուցին եւ թագաւորեցուցին զորդի կոմսին Տրապօլսոյ եւ բընձին Անտիոքու՝ զՖիլիպն տանն Հայոց, տալով նմա ի կնութիւն զդուստր թագաւորին Լեւոնի զՋապէլն, զի Ուռնգաց թագաւորին որդին ոչ եկն յորժամ լուաւ զմահ թագաւորին Լեւոնի: Եւ Ֆիլիպն յորժամ եղեւ թագաւոր՝ սկսաւ եղջիւր ածել իշխանացն Հայոց, եւ արհամարհէր զնոսա, որ եւ զինչս թագաւորին Լեւոնի ժողովեալ եւ զնախնեաց նորա եւ սկսաւ փոքր փոքր յԱնտիոք տանել: Իսկ իշխանքն Հայոց ոչ տարան այնպիսի գործոյն, այլ ըմբռնեցին զնա եւ եդին յարգելանս, եւ եղեւ խռովութիւն մեծ ընդ նոսա եւ ընդ անտիոքացիսն մինչեւ բարձաւ նա ի միջոյ եւ ապա եղեւ խաղաղութիւն»[78]:

Այն, որ Կոստանդինի նկատմամբ խմբագիրը յատուկ վերաբերումունք ունի, նկատւում է նաեւ հետեւեալ դրուագում. «Եւ ի տեղն առին ծառայ զպարոն Կոստանդին՝ զորդին Հեթմոյ, Լամբրոնին տիրոջն, որ էր իւր անէր, եւ զԿեռսակ՝ զՍիկոյ տէրն, զԱզիզ զՕքսենց, եւ այլ իշխանք եւ ձիաւորք»[79]:

Նոյն հատուածը թիւ 1308 ձեռագրում. «...ապա յազգմանէ չարին կալան զգունդուստապլն Հայոց Կոստանդին, զորդին քեռոյն թագաւորին Լեւոնի, եւ զԿոստանդին որդի Հեթմոյ, եւ զԿեռսակ տէր Մաղուայոյ եւ այլ իշխանս ընդ նոսա...»[80]:

Բ ձեռագրախումբը, որն այնքան մանրամասն է ներկայացնում այս ճակատամարտը, մատնացոյց անելով անգամ Ատան պայլի դաւաճանութիւնը, լռում է խնամքով թաքցնում է Կոստանդին պայլի դերի ընկնելու փաստը: Դրանով խմբագիրը, ըստ էութեան, շրջանցում է անգամ այն, ինչը կարող էր անբարենպաստ տպաւորութիւն ստեղծել Կոստանդին պայլի մասին: Նրա համար առաւել կարեւոր է իր հերոսին ըստ արժանւոյն ներկայացնելը: Հետեւաբար՝ այս պատճառով է, որ Լեւոն Բ արքան եւ միւսները անցնում են երկրորդ պլան: Իսկ խմբագրի «յետ մահուան թագաւորին Լեւոնի արար իւր փոխարէն Կոստանդին գունդստապլն հարիւրապատիկ եւ իւր դստերն. զի լաւ է թագաւորաղէկ ճորտ պահել քան զայլ հարստութիւն»[81] իր բնոյթով միջանկեալ մէջբերումը բացայայտում է խմբագրի նպատակը եւ հաստատում է մեր դիտարկումը:

77 ՄՄ, ձեռագիր, թիւ 4584, թ. 372բ:

78 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 225:

79 ՄՄ, ձեռագիր, թիւ 4584, թ. 372բ:

80 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 221-222:

81 ՄՄ, ձեռագիր, թիւ 4584, թ. 372բ:

Ասուածին պէտք է աւելացնել նաեւ այն, որ միայն Բ խմբի ձեռագրերին յատուկ «Տարեգրքի» շարունակութիւնը (գրուած Լեւոն Ե-ի (1320-1342 թթ.) օրօք ապրած անյայտ հեղինակի կողմից), որը ըստ էութեան Հեթումեան արքայատոհմի պատմութանը նուիրուած համառօտ տարեգրութիւն է, բովանդակութեան եւ ոճի առումով կապուած եւ փոխհամաձայնեցուած է թուում տեքստի բուն շարադրանքում տեղ գտած խմբագրական նշուած փոփոխութիւնների հետ: Ուստի կարելի է ենթադրել, որ «Տարեգրքի» նոր խմբագրութիւնը, ի դէմս Բ խմբի սկզբնագրի, ստեղծուել է հէնց դրա շարունակողի կողմից:

Նշենք, որ Բ խմբի ձեռագրերը նոյնպէս պարունակում են տարբերութիւնները, ըստ որի անհրաժեշտութիւն է առաջանում առանձնացնել ձեռագրերի երեք ենթախումբ՝ Բ1, Բ2(a) եւ Բ2(b): Այս ձեռագրախմբի տասներեք ձեռագրերից մէկը՝ Լոնդոն, թիւ 5458, պարունակում է Բ2(a) եւ Բ2(b) ենթախմբերում բացակայող եւ այս գրչագրի համար բնութագրական տարընթերցումներ: Ձեռագրերից չորսը՝ Երեւան, թիւ 4548, Վենետիկ, թիւ 542, Երեւան, թիւ 1900, Սանկտ Պետերբուրգ, թիւ 40, ունեն միայն Բ2(a) ենթախմբին յատուկ տարընթերցումներ: Մնացած ձեռագրերում՝ Վենետիկ, թիւ 1261, Վենետիկ, թիւ 1149, Երեւան, թիւ 4337, Փարիզ, թիւ 229, Երուսաղէմ, թիւ 521 (պարունակում է երկու օրինակ), Զմմառ, թիւ 469, Վիեննա, թիւ 104), առկայ են Բ1 եւ Բ2(a) ձեռագրերում բացակայող եւ այս գրչագրերի համար ընդհանուր տարընթերցումներ: Ձեռագրերի բաղդատումից պարզ է դառնում, որ Բ1 ենթախումբը, լեզուաոճական տարընթերցումներից բացի, երկի վերջում ունի յաւելումներ (Տիեզերական ժողովների մասնակիցների ու հայ կաթողիկոսների ժամանակագրութիւնը (թղ. 106բ-110ա) եւ Կանչոյի տէր Օշինի չափածոյ նամակն Անարզաբայի Գրիգոր եպիսկոպոսին ու վերջինիս պատասխանը (թղ. 111բ-114ա)), եւ յապաւումներ (Լեւոն Ե-ին ուղղուած երկու բարեմաղթանքները), որով տարբերւում է միւս երկու ենթախմբերից: Իր հերթին Բ2(a) եւ Բ2(b) ենթախմբերի բնագրերի համեմատումը ցոյց է տալիս, որ Բ2(b) ենթախումբը ծագում է Բ2(a) ենթախմբից, մասնաւորապէս՝ թիւ 1900 ձեռագրից: Նրանց միջեւ առկայ տարբերութիւնները (Կոստանդեայ (թիւ 1900, թ. 3ա), Կոստանդեա (թիւ 4337, թ. 3), բ ամաց (թիւ 1900, թ. 3ա), երկուց ամաց (թիւ 4337, թ. 3), Կոստանդինուպօլիս (թիւ 1900, թ. 4ա, բ), Պոլիս (թիւ 4337, թ. 5), զպատճառան կարգաւ (թիւ 1900, թ. 4բ), կարգաւ զպատճառսն (թիւ 4337, թ. 5), երկրորդ Ապուսահլին (թիւ 1900, թ. 4 բ), բ Ապուսահլին (թիւ 4337, թ.6), խայպրբեր (թիւ 1900, թ. 6 բ), խայբարբեր (թիւ 4337, թ. 8), հագնէր զրահս (թիւ 1900, թ. 6բ), հագնէր լանջապանակս (թիւ 4337, թ. 9), զՓիլիպէ (թիւ 1900, թ. 7), զՓիլիպպէ (թիւ 4337, թ. 9), Տարոյնոյ (թիւ 1900, թ. 10ա), Տարօնոյ (թիւ 4337, թ. 12), մահ դեղով (թիւ 1900, թ. 14ա), մահադեղով (թիւ 4337, թ. 18), յդարկէր (թիւ 1900, թ. 14բ), յուղարկէր (թիւ 4337, թ. 18), զարդարեցին (թիւ 1900, թ. 14բ), զարդարեցան (թիւ 4337, թ. 18) եւ այլն) չունեն համակարգուած բնոյթ եւ հիմնականում սահմանափակւում են լեզուաոճական բնոյթի տարընթերցումներով:

Այսպիսով, ընդհանրացնելով՝ նշենք, որ մեզ է հասել «Տարեգրքի» տասնչորս ձեռագիր օրինակ, որոնցից երեքը՝ թիւ 4584, թիւ 1900, թիւ 4337, գտնւում է Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում, չորսը՝ թիւ 1308, թիւ 1149, թիւ 1261, թիւ 542 (պատաւիկ)՝ Մխիթարեան միաբանութեան Վենետիկի մատենադարանում, մէկը՝ թիւ 40, գտնւում է Սանկտ Պետերբուրգում՝ արեւելագիտութեան ինստիտուտում, մէկը՝ թիւ 104, Վիեննայի Մխիթարեան մատենադարա-

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

նում, մէկը՝ թիւ 469, Զմմառի վանքի գրադարանում, երկուսը՝ թիւ 521, Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց վանքի գրադարանում, մէկը՝ թիւ 5458, Լոնդոնում՝ Բրիտանական թանգարանում եւ եւս մէկը՝ թիւ 229, Ֆրանսիայի ազգային գրադարանում: Ըստ դարերի՝ «Տարեգրքի» ընդօրինակութիւնների դասդասումը հետեւեալն է. ԺԳ.-ԺԴ. դդ.՝ 1, ԺԴ.-ԺԵ. դդ.՝ 1, ԺԶ. դ.՝ 2, ԺԹ. դ.՝ 10 օրինակ: Տարբեր ընդօրինակութիւններում բուն «Տարեգրքի» կամ շարունակութեան աւարտի թուականները հետեւեալ պատկերն ունեն. 1272 թ. աւարտուող օրինակների թիւը՝ 1, 1327 թ.՝ 1 (պատառիկ), 1331 թ.՝ 12:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» ձեռագրերի ճիւղագրութիւնը



ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԱՆՑՈՒՄԸ ՊԱՀԼԱՒՈՒՆԻՆԵՐԻՆ

Կարէն Սաթեւոսեան

Անիի Բագրատունեաց թագաւորութեան պատմութիւնը հանգամանօրէն ուսումնասիրուել է հիմնականում քաղաքական իրադարձութիւնների տեսանկիւնից, իսկ ԺԱ. դարի 20-40-ական թուականների դէպքերը՝ յատկապէս պետութեան արտաքին յարաբերութիւնների համատեքստում, քանի որ այդ ճգնաժամային շրջանն ի վերջոյ աւարտուեց թագաւորութեան անկմամբ՝ Անիի բիւզանդական զաւթումով: Շատ հետաքրքրական էր նաեւ այդ ժամանակաշրջանում Անիի՝ հասարակական յուզումներով ու հակասութիւններով լի ներքաղաքական կեանքը: Յիշեալ իրադարձութիւնների ժամանակ առաջնային դեր բաժին ընկաւ Հայոց եկեղեցուն եւ նրա առաջնորդ Պետրոս Ա (յետագայում՝ Գետադարձ մականուանուած) կաթողիկոսին (1019-1054 թթ.):

Յայտնի է, որ կաթողիկոսական աթոռի վրայ Պետրոսին յաջորդեց քրոջ որդին՝ հէնց նրա ձեռքով օծուած Խաչիկ Ա Անեցին (1054-1065 թթ.): Դրանից յետոյ բիւզանդացիները փորձեցին արգելել նոր կաթողիկոսի ընտրութիւնը, սակայն հայ ազնուականութեան ջանքերով այն տեղի ունեցաւ, եւ կաթողիկոս դարձաւ Պահլաւունեաց տոհմից Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը՝ ձեռնադրութեան ժամանակ ստանալով Գրիգոր անունը, իսկ աւելի ուշ՝ Վկայասէր մականունը (1066-1105 թթ.): Նրա աթոռակալութեամբ Հայոց կաթողիկոսների յաջորդականութեան մէջ տեղի ունեցաւ մի էական փոփոխութիւն. կաթողիկոսական աթոռը համարուեց տոհմական, եւ Պահլաւունիները, ովքեր ներկայանում էին իբրեւ Հայոց առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տոհմակիցներ, սկսեցին ժառանգականութեան սկզբունքով բազմել կաթողիկոսական գահին: Այդ երեւոյթը շարունակուեց շուրջ մէկուկէս դար:

Ներկայ ուսումնասիրութիւնը նուիրուած է այն խնդրին, թէ ինչպէս դեռեւս ԺԱ. դարի 20-40-ական թուականներին Անիի թագաւորութեան մէջ կարեւոր դիրքի հասած Պահլաւունեաց իշխանական տոհմի ներկայացուցիչները նպատակադրուած շարժում սկսեցին կաթողիկոսական աթոռին տիրելու համար: Կարելի է ասել, որ այն մի ուշագրաւ հեռագնայ ծրագիր էր՝ իր որոշակի դրդապատճառներով ու հիմնաւորումներով: Ուղղակի եւ անուղղակի փաստերը ցոյց են տալիս, որ այդ գործընթացի նախահիմքերը դրեցին Անիի թագաւորութեան ազդեցիկ գործիչներ սպարապետ Վահրամ Պահլաւունին եւ նրա եղբայր Աբլղարիբ մարզպանը, իսկ բուն ծրագրի հեղինակը վերջիններիս եղբօրորդի Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին էր:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ՊԵՏՐՈՍ Ա-Ի ԺԱՄԱՆԱԿ

Քննուող ժամանակաշրջանում թէ՛ Հայոց պետութեան եւ թէ՛ եկեղեցու կեանքում տեղի էին ունենում աննախադէպ իրադարձութիւններ: Նախ՝ Գագիկ Ա-ի (989-1017 թթ.)[1] մահից յետոյ նրա որդի-

1 Գագիկ Ա Բագրատունու մահուան թուականը հայագիտութեան մէջ ընդունուած է 1020-ը: Կ. Իւզբաշեանը որոշ սկզբնաղբիւրների վկայակոչմամբ այն համարում է 1017-ը (**К. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988, с. 156-157):

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@